ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության համահամալսարանական ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր

ԷԴԻՏԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության համահամալսարանական ամբիոնի հայցորդ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

Հասարակագիտական մտքի պատմությունը հաստատում է այն ճշմարտությունը, որ կրթությունը բոլոր ժամանակներում եղել է մարդկության առաջընթացի անհրաժեշտ խթանը. այն ոչ միայն գիտելիքների, կարողությունների, այլ նաև հասարակայնության արժեհամակարգի ձևավորման շարունակական և անընդմեջ գործընթաց է: Որպես սոցիալական պրակտիկայի ոլորտ կրթությունը նաև միջնորդ օղակ է մարդկության կուտակած փորձի, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքների, կարողությունների պահպանման ու փոխանցման համար: Հանդիսանալով անձի հոգևոր գործունեության ոլորտ, կրթությունը զարգացնում է մարդու ինտելեկտը, ձևավորում է բարոյական, գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքներ, առաջացնում է սեփական անձը և հասարակությունը բարեփոխելու ձգտում: Իրավացի է անգլիացի գիտնական Ջ.Սայմոնը, ով կրթությունը համարել է «...հասարակության ներսում մարդու ձևավորման միջոց»[1]:

Կրթությունը գիտական ինֆորմացիայի, սերնդեսերունդ սոցիալական և մասնագիտական փորձի ձևավորման, սոցիալական մշակույթի յուրացման, փոխառման և փոխանցման բազմաձև գործընթաց է:

Կրթության անհրաժեշտ ցուցանիշներից մեկը գիտելիքն է. այն օբյեկտիվ իրականության մասին եղած փաստերն ու երևույթներն են, որոնք յուրացվում և մտապահվում են մարդու կողմից: Գիտելիքը մարդու գաղափարների ամբողջությունն ու տրամաբանական միասնությունն է. այն արտահայտում է սովորողի կողմից այս կամ այն առարկայի տեսական յուրացումը: Գիտելիքն արժեհամակարգ է, հետևապես այն գնահատվում է:

Տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում գիտելիքի գնահատումն իրականացվել է տարբեր եղանակներով՝ հաշվի առնելով գիտելիքի մակարդակի մասին գոյություն ունեցող ժամանակի պատկերացումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրթություն, գիտելիք, արժեհամակարգ, չափում, գնահատման համակարգ, սոցիալական պրակտիկայի ոլորտ, անձի հոգևոր գործունեության ոլորտ, համամարդկային արժեքներ, օբյեկտիվ իրականություն, ծրագիր, մեթոդ:

Մարդու հիմնախնդրի և մարդկային իմացության հանդեպ Սոկրատեսի փի-

[1] J. Simon, The History of Education in Patent Present // Oxford Review of Education, 1977, vol. 3 N 1.

լիսոփայական կողմնորոշումը նշանավորվեց երբեմնի բնափիլիսոփայությունից կտրուկ շրջադարձ դեպի բարոյափիլիսոփայությունը: Մարդը և աշխարհում նրա տեղի հարցը եղել են Սոկրատեսի բարոյագիտական ուսմունքի պրոբլեմատիկան և առանցքը: Ինքնաճանաչողության ճանապարհը մարդուն տանում է աշխարհում իր տեղը գտնելուն, ճշմարիտ ճանաչողությունը կոչված է հավաստի, վստահելի կողմնորոշիչներ տալու մարդուն իր ամենօրյա կյանքի համար, ուրեմն ամեն մի ճանաչողության (գիտելիքի) արժեքը մարդկային գործերը բանականորեն վարել սովորելու մեջ է. «Պարզ չէ՞ արդյոք այժմ.– ասում է Սոկրատեսը,– որ իրենց ճանաչելու շնորհիվ մարդիկ ճաշակում են շատ լավ բաներ և կեղծ պատկերացումների հետևանքով՝ հիմար շատ բաներ: Իրեն ճանաչող մարդը գիտի և այն, թե ինչը կարող է իր համար շատ լավ լինել և տարբերում է այն, թե ինչ կարող է անել և ինչ չի կարող»[1]:

Գիտելիքը Սոկրատեսի պատկերացմամբ համարվում է իբրև մարդկային վարքի միակ պարտադիր կարգավորիչ և համարժեք չափանիշ: Գիտելիքի կարգավորող դերն ըստ նրա, աներկբա և բացարձակ է. «... Գիտելիքից ուժեղ ոչինչ չկա, այն միշտ և ամեն ինչում հաղթում է հաճույքին և մնացած ամեն ինչին»[2]:

Գիտելիքի գնահատման փորձն առկա է սոկրատեսյան երկխոսություններում: Սոկրա–տեսը ի՞նչ և ինչպե՞ս ասելու հմուտ ճարտարապետ էր: Բանավեճի արվեստում նա բացար–ձակապես գերազանցում էր սոփեստներին, ովքեր վիճաբանության ճանաչված գիտակներ էին: Բանավեճը Սոկրատեսի համար համապատասխան երևույթի քննարկման և ճշմարտության որոնման երկխոսության ձև էր: Իրենց տրամաբանական ամբողջության և պատճառհետևան–քային կապերի մեջ Սոկրատեսի երկխոսություններն ուղղակիորեն և անմիջականորեն նրա դիալեկտիկան էր գործողության մեջ: Քսենոֆոնի վկայությամբ՝ «Սոկարտեսի կարծիքով «դիալեկտիկա» բառը ծագում է այն բանից, որ մարդիկ հավաքվում ու համատեղ քննում են առարկաներն ըստ իրենց սեռերի: Դրա համար էլ, ըստ նրա, մարդը պետք է իրեն նախապատրաստի այդ առաքինությանը որքան հնարավոր է լավ և ամեն կերպ հոգա դրա մասին, քանի որ այստեղից են դուրս գալիս թե՛ բարոյական, թե՛ կառավարելու ընդունակ և թե՛ հմտագույն դիալեկտիկ մարդիկ»[3]:

Զրույցի արվեստն, ըստ Սոկրատեսի, պարտադրում է ելնել այն բանից, ինչն արդեն հայտնի է զրուցակցին: Ուստի հարկավոր է հուշող հարցերի միջոցով որոշարկել զրուցակցի իմացության և չիմացության սահմանները. «Բայց, եթե,– ասում է Սոկրատեսը,– ծնվելով, մենք կորցնում ենք այն, ինչ ունեցել ենք նախքան ծնվելը, իսկ հետո զգայությունների օգնությամբ վերականգնում ենք նախկին գիտելիքները, այդ դեպքում, ըստ իս, «ճանաչել» նշանակում է վերականգնել այն գիտելիքները, որոնք քեզ արդեն պատկանել են: Եվ անվանելով դա վերհիշում, մենք թերևս, գործածած կլինենք ճիշտ հասկացություն»[4]:

Սոկրատեսյան զրույցը ելնում էր օբյեկտիվ ճշմարտության առկայության նախադրյալից, որի ճանաչումն ունկնդիրներին վերածում էր զրուցակիցների և միավորում էր նրանց ինտելեկտուալ հնարավորություններն ու կարողությունները:

Սոկրատեսը բարձր էր գնահատում զրուցակցի իր հետ ունեցած համախոհությունը և հմտորեն գտնում էր այնպիսի պատասխաններ, որոնց առերևույթ համաձայն էր լինում և ինքը: Սակայն զրույցի ինչ–որ փուլում պարզվում էր, որ զրուցակիցն սկսել է բացահայտորեն հակասել ինքն իրեն և որ Սոկրա–

[1] Ксенофонт, Воспоминания о Сократе, IV, 1, 26:
[2] Платон, Протагор, 357 с:
[3] Ксенофонт, Воспоминания о Сократе, IV, V 11:
[4] Платон, Федон, 75 с:

տեսի հարցերը նրան փակուղու մեջ են գցել: Այս դեպքում ճշմարտության հետազոտման ընտրած ուղին դուրս էր գալիս կեղծ, իսկ «սոկրատեսյան համախոհություն»-ը ներկայանում էր որպես միտումնավոր հաշվենկատություն: Սոկրատեսին հաճախ դատապարտում էին այն բանում, որ նա խճճվում էր միտումնավոր, որպեսզի խճճի զրուցակցին: Ուսուցման սոկրատեսյան մեթոդի այդօրինակ թիրախային պահերը բացահայտում էին ոչ միայն այս կամ այն ունկնդրի չիմացությունը, այլև հաստատում էին՝ «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» սոկրատեսյան փիլիսոփայական չիմացության հիմնական սկզբունքի ճշգրիտ լինելը:

Սոկրատեսյան իրոնիան (հեգնանքը) առավելապես ներողամիտ է, զերծ չարությունից և ամբարտավանությունից. այն և՝ շշմեցնում և՝ խոցում է իր զրուցակցին, միաժամանակ հնարավորություն է տալիս երկխոսական փակուղուց համատեղ ջանքերով դուրս գալու, դիալեկտիկական զրույցների դաշտ մտնելու և վերջնանպատակին հասնելու համար:

Իրոնիան սոկրատեսյան ուսուցման մեթոդի բացասական մասն է՝ ***գիտելիքի ստուգելիության և չափման նվազագույն միավորը***:

Դիալեկտիկական զրույցների ընթացքում, Սոկրատեսի կարծիքով, մարդը վերականգնում է իր գիտելիքները և վերստեղծվում է հոգեպես: Դիալեկտիկայի միջոցով գիտելիքի վերակառուցմանն ու նրա ամրապնդմանն օգնող զրուցակցի դերն իր տատմերական արվեստի համեմատությամբ նա անվանում է «մաևտիկա», որը սոկրատեսյան մեթոդի երկրորդ՝ դրական մասն է: Մաևտիկան միաժամանակ ***գիտելիքի ստուգելիության և չափման ամենաբարձր միավորն է***: Այդ մասին Սոկրատեսն ասում է. «... իսկ մեր արվեստում (նկատի ունի տատմերական արվեստը -Շ.Ո.) ամենամեծ բանն այն է, որ տարբեր եղանակներով կարող ենք հարցուփորձ անելով իմանալ, արդյոք պատանու միտքը ծնում է կեղծ ստվեր, թե ճշմարիտ ու լիարժեք պտուղ»[1]: «Տատմերական արվեստի» միջոցով վերականգնված գիտելիքը վերստին չկորցնելու համար, Սոկրատեսն առաջարկում է վերհուշ-ճանաչողության արդյունքները «կապակցել» ընդհանուր սահմանումների և հասկացությունների ճանապարհով:

Կանտը բարձր է գնահատել մաևտիկայի սոկրատեսյան մեթոդը, առանձնապես ընդգծելով այդ մեթոդի դաստիարակագիտական կողմը: «Մանկավարժության մասին» գրքում նա գրում է. «Բանականությունը դաստիարակելիս պետք է վարվել սոկրատեսաբար: Սոկրատեսը, որն իրեն անվանում էր իր ունկնդիրների ճանաչողական տատմայր, երկխոսություններում, որոնք որոշ չափով մեզ համար պահել է Պլատոնը, օրինակներ է տալիս այն բանի, թե ինչպես նույնիսկ տարեց մարդկանցից կարելի է ինչ-որ բան քաղել նրանց իսկ բանականությունից»[2]:

Մեծ է Սոկրատեսի ազդեցությունը հատկապես փիլիսոփայության կանտյան ըմբռնման և փիլիսոփայության գիտական հասկացության սահմանման մեջ: Կանտը քննադատելով փիլիսոփայության՝ իբրև գիտելիքների համակարգի սխոլաստիկական ըմբռնումը, հենվելով Սոկրատեսի վրա, սահմանեց փիլիսոփայությունը որպես «իմաստության մասին ուսմունք, որպես բանականության օրենսդիր»: Այստեղ նրա համար կողմնորոշիչ էր ***կարծիքի*** և ***ճշմարիտ գիտելիքի*** սոկրատեսյան տարբերակումը: Իր Տրամաբանություն աշխատության մեջ Կանտը գրում է. «... Պրակտիկ փիլիսոփան՝ ուսմունքով ու գործով իմաստնության դաստիարակը, փիլիսոփա է իսկական իմաստով:

---

[1] Платон, Теэтет, 150 б-с:

[2] Кант И., Трактаты и письма, Москва, 1960, с. 481:

Քանզի փիլիսոփայությունը մարդկային բանականության վերջին նպատակները մեզ ցույց տվող կատարյալ իմաստնության գաղափարն է»[1]:

«Բանականության սահմանների» հարցը վերլուծելիս Կանտը նորից դիմում է գիտելիքի և անգիտության հարաբերակցության, գիտելիքի ստուգելիության և չափման սոկրատեսյան բանաձևին. «Այսպիսով,– գրում է նա,– իր անգիտության իմացումը ենթադրում է գիտություն և դրա հետ մեկտեղ դարձնում է համեստ. ընդհակառակը, երևակայական գիտելիքը դարձնում է ամբարտավան: Այսպես, Սոկրատեսի չիմացությունը գովելի չիմացություն է, ըստ էության չիմացության իմացություն իր իսկ խոստովանությամբ»[2]:

Գիտելիքի գնահատման անհրաժեշտ ձևերից է չափումը[3]. այն հնարավորություն է տալիս ստանալ որոշակի քանակական տվյալներ: Չափման ժամանակ համադրվում են որակապես համարժեք բնութագրերը: Չափման գործընթացն ինչպես ճանաչողական, այնպես էլ փորձարարական գործընթաց է. այն պահանջում է ինչպես գործնական, այնպես էլ տեսական հարուստ գիտելիքներ: Որպեսզի ընտրվի մեծության չափը կարևոր է իմանալ, թե որ երևույթներն են միմյանց համարժեք: Նախապատվությունը տրվում է չափի այն միավորին, որը կիրառելի է առավել մեծ թվով գործընթացների համար: Օրինակ, հնում երկարությունը չափել են արմունկներով, քարերով, փայտե մետրով, իսկ ներկայումս կողմնորոշվում են վակուումում էլեկտրամագնիսական ալիքի երկարությամբ: Հնում ժամանակը չափել են աստղերի, արևի, լուսնի տեղաշարժումներով: Ներկայումս ժամանակը չափում են վայրկյանի ընդունված էտալոնով[4]:

Չափումն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, երբ հայտնի է լինում, թե ինչ է չափվում և ինչպես է չափվում: Տվյալ դեպքում չափման գործընթացի էությունն ավելի որոշակի դարձնելու համար, քննարկենք սովորողների գիտելիքների գնահատման գործ–ընթացը, որը չափվում է, ենթադրենք, 10 միավորային սանդղակով: Ուսուցիչը քննում է աշակերտին և նշանակում է գնահատական: Աշակերտը պատասխանում է ուսուցչի տարբեր հարցերին, սակայն բոլոր հարցերի պատասխանը նա բերում է մեկ ընդհանուր հայտարարի: Երբ աշակերտը հայտնում է իր գնահատականը, ապա ստացված միավորից հնարավոր չէ իմանալ, թե որ հարցի պատասխանից է նա ստացել այդ գնահատականը: Աշակերտի գիտելիքի գնահատումը չափման գործընթացի մասնավոր դեպքն է: Հետևապես չափումը քանակական աստիճաններն ամրագրում է որոշակի որակի շրջանակներում: Ուսուցիչն աշակերտի տարբեր պատասխանները հանգեցնում է մի որոշակի որակի, այնուհետև առանձնացնում է տար–բերությունները: Այսպես, օրինակ, 5 և 7 միավորները չափվում են որոշակի որակներում: Առաջին դեպքում (5) այդ որակները պարզապես ավելի քիչ են՝ քան երկրորդում (7):

Գնահատելով աշակերտի գիտելիքներն ուսուցիչը ելնում է ինչպես տվյալ դասընթացի առարկայական առանձնահատկություններից, այնպես էլ տվյալ առարկայի էության իր պատկերացումներից: Աշակերտն իր հերթին նույնպես

[1] Նույն տեղում, էջ 332:

[2] Նույն տեղում, էջ 352:

[3] Չափումը ճանաչողական գործընթաց է, որի նպատակն է չափիչ սարքերի միջոցով որոշել մատերիական օբյեկտների բնութագրերը՝ կշիռը, երկարությունը, կոորդինատները, արագությունը և այլն: Չափումը հանգում է չափվող մեծության համեմատությանը նրա հետ համաբնույթ մի որոշ մեծության հետ, որն ընդունվում է իբրև չափման միավոր (էտալոն): Չափումը բարձրացնում է մարդկային իմացության ճշգրտության աստիճանը (տես Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Ե., 1975, էջ 331):

[4] Մեկ վայրկյանը հավասար է ցեսիումի ատոմի գերնուրբ կառուցվածքի ճառագայթային անցումների 9192631770 շրջաններին:

կարող է ընդհանրացնել, մտովի հաշվարկել իր հաջողություններն ու վրիպումները: Սակայն, նրանք կարող են հանգել տարբեր կարծիքների, որովհետև ուսուցիչն ու աշակերտը գիտելիքների գնահատման խնդիրը տարբեր կերպ են ընկալում, նրանք երկուսն էլ ընդհանրացնում են, չափուձևում, այնուամենայնիվ, ուսուցչին՝ որպես պրոֆեսիոնալի և տվյալ առարկայի հմուտ գիտակի, առավել լավ է հաջողվում գնահատել հնարավորինս ճիշտ և օբյեկտիվ:

Այն տեսակետը, որ արժեքները փոխանցվում են նաև կրթության միջոցով հաստատվում է համաշխարհային և տեղական կրթամշակութային փորձով. դա վերաբերվում է նաև գնահատման համակարգի համաշխարհային փորձին: Այդ առումով ուշագրավ է Ֆինլանդիայի1 փորձը, քանի որ Եվրոմիությունը նախագծել է որպես համաեվրոպական կրթական մոդելի նախատիպ և հիմք ընդունել ֆիննական մոդելը:

Ինչ վերաբերում է ֆիննական գնահատման համակարգին, ապա պետք է նշել, որ ավարտական քննություններն այստեղ պարտադիր չեն, չկան նաև միասնական պետական քննություններ: Առաջին դասարանում, ընդհանրապես, թվանշանային գնահատում չի կատարվում, իսկ հիմնական դպրոցում գնահատումը 10–միավորային է՝ 4–ը համարվում է ցածր, 10–ը՝ բարձր գնահատական: Գնահատման համակարգում առաջին հերթին կարևորվում են սովորողների ընդունակությունների և կարողությունների զարգացումը, տարիների ընթացքում ձեռք բերված առաջադիմությունը, ուսման ընթացքում ունեցած ամենօրյա հաջողությունները, ուսումնական նպատակների քայլ առ քայլ իրականացումը և այլ գործոններ: Այսօրինակ մոտեցումը սովորողի (նաև ծնողի) ուշադրությունը արտաքին (թվանշանային) գնահատումից ուղղորդում է դեպի ներքին գնահատումը՝ ինքնագնահատումը: Գնահատման ավանդական բոլոր ձևերը համարյա դուրս են մղվել գործածությունից: «Կրթության մասին օրենք»–ում հստակ նշվում է, որ հիմնական դպրոցի սովորողներն ինչպես պետական մարմինների, այնպես էլ ատեստավորման ազգային ծառայությունների կողմից ոչ մի հսկողության չեն ենթարկվում: Ուսուցչի դերն ու նրա հանդեպ ունեցած վստահությունն այնքան մեծ է, որ նրան «...իրավունք է տրվում ինքնուրույն, իր ազատ կամքով անցկացնել ցանկացած ներքին ստուգում, քննություն և այլն»[2]: Նույն ձևով չի վերահսկվում նաև տնային հանձնարարությունները. դրա կատարման ամբողջ պատասխանատվությունը հիմնականում ընկնում է սովորողի վրա: Այս կամ այն թեմայի ավարտից հետո անցկացվում են թեստային ամփոփիչ ստուգում-

[1] Ֆինլանդիան զարգացած արդյունաբերական երկիր է: Այն իր համախառն ներքին արդյունքի տարեկան աճով (5,1%) գերազանցում է ինչպես ԱՄՆ–ին (4,3%), այնպես էլ եվրոպական երկրներին (2,6%): Հատկացումները կրթության ոլորտում կազմում են պետբյուջեի 10%–ը: Կրթության վրա Ֆինլանդիան տարեկան ծախսում է 5,5 մլրդ եվրո: Մեկ դպրոցականի համար հատկացված տարեկան ծախսերը կազմում են 5,5 հազար եվրո, ուսումնարանի ուսանողների համար՝ 5,8, բուհ–ի ուսանողի համար 8,1 հազար եվրո: Նշենք, որ կրթության համար հատկացված գումարների զգալի մասը տրամադրվում է նախադպրոցական և տարրական դպրոցի կարիքների համար, այն գիտակցումով, որ բարձր որակի կրթություն ապահովելու կարևոր ցուցանիշներից մեկը կրթության հիմքի ամրությունն է: Ուսուցչի մեկ ամսվա աշխատավարձը 2500 եվրո է, որը տարեցտարի բարձրանալու միտում ունի: Կրթության բարձր որակի ապահովման համար այստեղ տարվում է կայուն և նպատակային պետական քաղաքականություն: Կրթության հաջողության կարևոր նախապայմաններից մեկը սոցիալական գործոնն է. հնարավորին չափ մեղմացված է սոցիալական անհավասարությունը, չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ հասարակության տարբեր շերտերի միջև եկամուտների տարբերությունը հասել է նվազագույնի, որը կրթության միջին մակարդակի բարձր լինելու անհրաժեշտ նախապայմաններից մեկն է (տես Ю. С. Дерябин, Финландия один из мировых лидеров в образования, Педагогика, 2004, 4):

[2] А. А. Маткин, Финнская модель школьного образования. http// www, mschols.ru:

ներ: Ուշագրավ է, որ ֆիննական դպրոցում գնահատման ավանդական թվային մեթոդներին հաճախ փոխարինում են բանավոր մեթոդները. այս դեպքում թվային ցուցանիշներն արտահայտվում են՝ հիանալի, գերազանց, լավ, բավարար, անբավարար բառերով: Մասնագետների կարծիքով այս մեթոդիկան ոչ միայն խրախուսում, այլև նպաստում է սովորողի քաղաքացիական գիտակցության ձևավորմանը:

Ֆինլանդիայի օրինակով Շվեդիան նույնպես աշխարհում աչքի է ընկնում իր կրթական բարձր մակարդակով: Կրթության վրա ծախսվում է տարեկան համախառն ներքին արդյունքի 6,7 %–ը և պետբյուջեի 10 %–ը, որն, անշուշտ, բարձր ցուցանիշ է աշխարհում:

Ֆինլանդիայի գնահատման համակարգի հետ համեմատած շվեդական համակարգն ունի որոշակի առանձնահատկություններ: Նախ նշենք, որ այստեղ «երկտարեցի» հասկացություն ընդհանրապես գոյություն չունի: Անկախ իրենց անհատական առաջադիմությունից, սովորողները մեխանիկորեն փոխադրվում են հաջորդ դասարան: Այս երևույթն ունի որոշ առավելություններ. նախ, տնտեսական առումով զերծ է ավելորդ ծախսերից, երկրորդ ունի մարդասիրական ուղղվածություն, երրորդ, խուսափելով սթրեսներից երեխան առողջական խնդիրներ չի ունենում: Այսուհանդերձ, ծնողների կամքով երեխան կարող է մնալ նույն դասարանում և կրկնել ուսումնական գործընթացը: Միևնույն ժամանակ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներն ուսումնական տարվա ընթացքում կարող են փոխադրվել հաջորդ դասարան՝ ունենալով դպրոցի տնօրենի և ծնողների համաձայնությունը:

Մինչև 8–րդ դասարանի երկրորդ կիսամյակի սկիզբը սովորողները չեն գնահատվում: Սովորողն ինքն է գնահատում և վերլուծում իր ամենօրյա ուսումնական գործունեությունը: Այդ նպատակով դպրոցի տնօրինության կողմից նրան տրվում է «Աշակերտի դպրոցական գրքույկ»–ը, որտեղ ամեն օր նա գրառումներ է կատարում ուսուցման ընթացքում ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների, տվյալ դասընթացի թեմատիկ բովանդակության, դասարանական, արտադասարանական և տնային աշխատանքների կատարման ընթացքի և ուսումնական ու դաստիարակչական այլ գործընթացների մասին: Նշումներ են արվում նաև ուսումնական գործընթացում ունեցած դժվարությունների, թերությունների ու բացթողումների և դրանք հաղթահարելու, դասարանական կոլեկտիվի և առանձին խմբերի հետ համագործակցելու և այլնի մասին: Աշակերտն ինքնուրույն փորձում է գնահատել իր հաջողություններն ու անհաջողությունները, բացահայտել դրանց առաջացման պատճառները: Այսօրինակ աշխատանքներն առաջին հերթին զարգացնում են սովորողի քննադատական մոտեցումն ուսումնական գործընթացին, հարստացնում գրավոր խոսքի մշակույթը, կրթում են նրա հոգեճանաչողական գործընթացները և, որ ամենակարևորն է, ձեռք են բերում ինքնադրսևորման, ինքնահիրացման, ինքնագնահատման, ինքնաճանաչման և ինքնավերլուծության արժեքավոր կարողություններ: «Աշակերտի դպրոցական գրքույկը»–ը սոսկ գրառումների և նշումների սովորական տետր չէ. այն կարևոր փաստաթուղթ է ուսուցչի համար հետևելու և անհրաժեշտ ուղղություն տալու աշակերտի դաստիարակության, ուսուցման և զարգացման ընթացքին: Ուսուցիչը նույնպես ունի սովորողների առաջադիմության ամենօրյա գրառման և հաշվառման մատյան՝ «Ուսուցման անհատական պլան», որտեղ կանոնավոր արձանագրվում են ուսուցման ընթացքում սովորողների ձեռքբերումներն ու կորուստները: Ամսվա մեջ մի քանի անգամ կազմակերպվում են ստուգումների և քննարկումների շաբաթներ, որտեղ

ուսուցիչը ծնողների և երեխաների հետ միասին ընդունում է արդյունավետ որոշումներ և պլանավորում է ուսումնական աշխատանքի հետագա ընթացքը:

Գնահատումը Շվեդիայում իրականացվում է 3 միավորային սանդղակով՝ **բավարար, լավ և գերազանց**: Չկան ավարտական քննություններ. միայն 9-րդ դասարանի ուսումնական տարվա վերջում շրջանավարտները հանձնում են պարտադիր միասնական ստուգողական աշխատանքներ: Ստուգողական աշխատանքները շվեդերեն, անգլերեն և մաթեմատիկա առարկաներից անցկացվում են թեստերի միջոցով: Ստուգողական աշխատանքներ են կազմակերպվում նաև 5-րդ դասարանի շրջանավարտների համար, սակայն դրանք մասսայական բնույթ չեն կրում: Եթե ստուգողական աշխատանքից շրջանավարտը բավարար գնահատական չի ստացել, ապա ատեստատում այդ առարկայի դիմաց գնահատական չի նշանակվում. տրվում է գրավոր եզրակացություն այդ առարկայի գծով նրա ինտելեկտուալ հնարավորությունների և կարողությունների մասին: Շրջանավարտը լրացուցիչ քննություն հանձնելու իրավունք ունի, եթե նույնիսկ մի քանի առարկայից նա անբավարար գնահատական է ստացել: Դպրոցի պարտադիր ծրագրերը (միջակուային) չհաղթահարող սովորողների համար նախատեսվում է մատչելի ծրագրերի տարբերակ, որտեղ որոշ տեսական առարկաներ փոխարինվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղորդող դասընթացներով: Այս դեպքում նրանց տրվում է դպրոցն ավարտելու վերաբերյալ ոչ լրիվ վկայական, այսուհանդերձ, ցանկության դեպքում նրանք կարող են իրենց ուսումը շարունակել գիմնազիայում: Դժվար չէ նկատել, որ տարածաշրջանային առումով հարևան այս երկու երկրների թե՛ կրթական և թե՛ գնահատման համակարգերում կան ինչպես ընդհանուր կողմեր, այնպես էլ հատկանշական տարբերություններ:

Ավստրալիան[1] ինչպես մեծահասակների գրագիտության մակարդակով (99%), այնպես էլ միջազգային ուսանողական գնահատման ծրագրերով գտնվում է երեսուն խոշոր զարգացած երկրների առաջատար հնգյակում:

Ավստրալիայի կրթական համակարգում կիրառվում է գնահատման խառը եղանակը: Ըստ իրենց ստացած գնահատականների սովորողները բաժանվում են 6 խմբի: Բարձր գնահա-տականը 99–100%-ն է (առավել լավ)՝ ցածրը՝ 0–49%-ը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

99–100%	առավել լավ
90–99%	խումբ 6
80–99%	խումբ 5
70–79%	խումբ 4
60–69%	խումբ 3
50–59%	խումբ 2
0–49%	խումբ 1

Որոշ բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնց կից գործում են նաև դպրոցներ, գնահատումը կատարվում է Օքսվորդի և Քեմբրիջի համալսարանների գնահատման համակարգի օրինակով (տե՛ս աղյուսակ 2):

[1] Ավստրալիան ունի պետության կողմից ֆինանսավորվող 37 բուհ և երկու մասնավոր համալսարան, նաև մի շարք այլ մասնագիտական հաստատություններ, որոնք ապահովում են բարձրագույն կրթության մակարդակի դասընթացներ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ-ն) Ավստրալիան գնահատել է որպես բուհեր հաճախելու գծով ամենաթանկ երկրներից մեկը: Ավստրալիայում գործում է նաև պետական մասնագիտական վերապատրաստման համակարգ. այն կոչվում է տեխնիկական և հետագա կրթություն (TAFE.– Technical and further education): 25–64 տարեկան ավստրալիացիների շուրջ 58%-ն ունի մասնագիտական կամ բարձրագույն կրթություն, որը բարձր ցուցանիշ է:

Աղյուսակ 2

HD	85 % – շատ լավ
D	75–84 % – լավ
Cr	65–74 % – միջինից բարձր
P	50–64 % – բավարար
F	49 % – ցածր ոչ բավարար (ան-բավարար)

Որոշ դպրոցներում կիրառվում է նաև հետևյալ համակարգը. (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3

A	90–100 %– շատ լավ
B	75–90 % – լավ
C	40–75 % – բավարար
D	25–40 % – վատ
E	10–25 % – նախնական
F	10 % – ոչ բավարար

Ավստրալիայի տարբեր նահանգներում ավագ ավարտական վկայական ստանալն ունի տարբեր ընթացակարգ: Նահանգների գերակշիռ մասում գործում է ATAP (Australian Tertiary Admissions Rank) համակարգը, որը հավանության է արժանացել կառավարության կողմից, քանի որ այն ուղղված է կրթության որակի բարձրացմանը և ծառայում է հոգուտ սովորողների: ATAP–ի ցուցանիշը 80%–ն է. այն բաժանված է 7 կարգի. դրանց մեջ մտնում են նաև նրանք, ովքեր թեպետ չեն անցել 12–ամյա կրթական ծրագիրը, սակայն 7 տարվա ուսումնառության ընթացքում հավաքել են 80%: Ավտոմատ կերպով նրանք անցնում են 12–ամյա կրթական ծրագրերն ավարտածների կարգին, որը նրանց իրավունք է վերապահում դիմել ATAP –ին:

Բավականաչափ հետաքրքիր է գիտելիքի գնահատման արևմտահայ դպրոցի փորձը (19–րդ դարի 2–րդ կես): Միասնական դպրոցական համակարգ ստեղծելու ծրագիրն արևմտահայ իրականության մեջ մասնավորապես իրականացվեց 1864 թվականին Ուսումնական խորհրդի կողմից մշակված և հրապարակված «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց» օրենսդրական փաստաթղթի իրավական ուժով. այն պատմական կարևոր փաստաթուղթ էր, ուներ գործունեության ծավալման ներքին կառույցներ, արտացոլում էր արևմտահայության կրթական իրական վիճակը, խնդիրներն ու պահանջները:

Կանոնադրության 5–րդ բաժինը, որը կրում է «Քննություն» խորագիրը՝ կազմված է 21 հոդվածից, որտեղ ամբողջությամբ ներկայացվում է սովորողների գիտելիքների և նրանց առաջադիմության գնահատման, քննությունների, մրցանակաբաշխությունների, դասարանից դասարան փոխադրվելու և այս կարգի այլ հարցեր:

1873 թ. հուլիսին 17–ին գործողության մեջ դրվեց «Հրահանգ բարեկարգության ազգային վարժարանաց» դպրոցական կանոնադրությունը, որը 1864 թվականին հրապարակված կանոնադրության լրամշակված տարբերակն էր 72 հոդվածով և 6 բաժնով՝ ***վարժարան, ուսմունք, բաշխումն ուսմանց, հոգաբարձություն և տեսչություն, վարժապետք և քննություն***: «Հրահանգ»–ի 6–րդ բաժինը վերաբերում է աշակերտների շարժի, քննությունների անցկացման, գիտելիքների ստուգման և գնահատման, մրցանակների և պարգևների սահմանման և բաշխման հարցերին:

1890 թվականին առանձին գրքույկով հրապարակվեց «Ներքին կանոնագիր Ազգային վարժարանաց»–ը. այն ընդգրկում է ազգային վարժարանների զարգացման համար մեկը մյուսից կարևոր 39 հոդված: Սույն կանոնագրում սովորողների գիտելիքների գնահատման համակարգում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այսպես, 1864 թվականի կանոնադրության 37 հոդվածի համաձայն գիտելիքները գնահատվում էին 21 միավորանոց սանդղակով, որտեղ թվանշանի հետ մեկտեղ նշվում էր

նաև սովորողների կարողության մակարդակը:

- 0 – անպիտան,
- 1, 2, 3 – տկարագոյն,
- 4, 5, 6 – տկար,
- 7, 8, 9 – միջակ,
- 10, 11, 12 – լավ,
- 13, 14, 15 – լավագույն,
- 16, 17, 18 – քաջալավ,
- 19, 20 – հույժ քաջալավ[1]:

1873 թվականի «Հրահանգ»–ի 48–րդ հոդվածում սովորողների գիտելիքների գնահատման ձևաչափը գրեթե մնացել էր նույնը, միայն հանվել էր 19, 20 հույժ քաջալավը[2]: 1890 թվականի «Ներքին կանոնագիր ազգային վարժարանաց» վավերագրում սովորողների գիտելիքների գնահատման համակարգում կատարվել են նշանակալի փոփոխություններ: Սույն կանոնագրի 16–րդ հոդվածում սահմանված է սովորողների գիտելիքների գնահատման 6 բալյան ձևաչափը.

- 0 – անպիտան,
- 1 – տկար,
- 2– միջակ,
- 3 – լավ,
- 4– լավագոյն,
- 5– քաջալավ[3]:

Կանոնագրում առանձին բաժին է հատկացված դպրոցական քննություններին: 33–րդ հոդվածը տեղեկացնում է, որ Կ.Պոլսի թաղային և արևմտահայ նահանգների ու գավառների դպրոցներում քննություններն անցկացվում էին 2 փուլով՝ քառամսյա և տարեկան: Քառամսյա քննությունները տարվում էին գրավոր, տարեկանը՝ բանավոր: Քննությունները կազմակերպում էին ուսուցիչները՝ տնօրենի գլխավորությամբ. մասնակցում էր նաև թաղային խորհուրդը:

Այսպիսով, 1860–1915 թթ. ընկած ժամանակահատվածում արևմտահայ իրականության մեջ հրապարակվել է 7–ից ավելի ուսումնական կանոնադրություն. տարիների ընթացքում դրանք քայլ առ քայլ կատարելագործվել են, որի շնորհիվ նկատելիորեն բարելավվել են ինչպես դպրոցների աշխատանքները, այնպես էլ սովորողների գիտելիքների և նրանց առաջադիմության գնահատման համակարգը:

Օրենսդրական փաստաթղթերի ստեղծման շնորհիվ ընդլայնվել է ուսումնական համակազմը, հստակեցվել մանկապարտեզների և նախակրթարանների ուսումնադաստիարակչական աշխատանքները, երկրորդական վարժարանում ուսուցումն ավելացել է մեկ տարով: Վերջին երկու տարում կրթությունը մասնագիտացվել է, հանձնարարվել է գործի դնել մանկավարժահոգեբանական պահանջները բավարարող նոր դասագրքեր, ուսումնական գործընթացում կիրառվել են առաջավոր մեթոդիկաներ, հարց է բարձրացվել ստեղծել որակյալ ուսուցիչ–մասնագետներ պատրաստող միջնակարգ և բարձրագույն դպրոցներ:

Ուկրաինայի կրթական համակարգում ներկայումս գործում է գնահատման 12–միավո–րային համակարգը. այն օրենքի ուժ է ստացել կրթության և գիտության երիտասարդության և սպորտի նախարարության 2000 թ. N 428/48 հրամանի հանձայն: Տարրական դպրոցի առաջին դասարանի երեխաները գնահատվում են խոսքային բնութագրումներով: Հաջորդ դասարաններում գնահատումը կատարվում է 12–միավորային սանդղակով՝ արդյունքները գնահատելով 1–ից 12 թվերով: Գնահատումն իրականացվում է բանավոր, գրավոր, գրաֆիկական և գործնական ստուգումների արդյունքների հիման վրա: Գնահատման համակարգում առանձ–նացվում է սովորողների

[1] Տե՛ս «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց», Կ.Պոլիս, 1864 թ., էջ 13:

[2] Տե՛ս «Հրահանգ բարեկարգության ազգային վարժարանաց», Կ.Պոլիս, 1873 թ., էջ 19–20:

[3] Տե՛ս «Ներքին կանոնագիր ազգային վարժարանաց», Կ.Պոլիս, 1890 թ., էջ 8:

ձեռք բերած գիտելիքների 4 մակարդակ. ***առաջին մակարդակ***՝ նախնական (1–3 բալ), աշակերտի պատասխանն ամբողջական չէ, այն նախնական պատ–կերացում է տալիս ուսումնասիրվող օբյեկտի մասին, ***երկրորդ մակարդակ***՝ միջին (4–6 բալ), աշակերտը վերարտադրում է հիմնական ուսումնական նյութը, կատարում է առաջադրանքը, տիրապետում է ուսումնական գործունեության տարրական կարողությունների, ***երրորդ մակարդակ***՝ բավարար (7–9 բալ), աշակերտը տիրապետում է հասկացությունների, բացահայտում է երևույթների էական կողմերը, նրանց միջև եղած պատճառհետևանքային կապերը, կարողանում է գիտելիքներն ինքնուրույն կիրառել ստանդարտ իրավիճակներում և այլն: Պատասխանը թեև ճիշտ է և տրամաբանորեն հիմնավորված, սակայն աշակերտը դժվարանում է ինքնուրույն դատողություններ անել: ***Չորրորդ մակարդակ***՝ բարձր (10–12 բալ), սովորողների գիտելիքները խորն են, համակարգված, առանց լրացուցիչ ջանքերի նա կարողանում է դրանք կիրառել ստեղծագործական աշխատանքում: Աշակերտը տիրապետում է ինքնուրույն դատողություններ և համեմատական վերլուծություններ անելու կարողություններին:

Եթե սովորողների գիտելիքները չեն համապատասխանում վերոնշյալ մակարդակներին, ապա նրանք չեն ատեստավորվում: Ի՞նչ հատկանիշներով է չափվում սովորողների գիտելիքների մակարդակը: Գիտելիքների մակարդակը որոշելիս հաշվի են առնվում պատասխանների հետևյալ բնութագրիչները՝ տրամաբանությունը, պատասխանների ամբողջականությունը, փաստերի հիմնավորվածությունը, գիտելիքների որակը, տարբեր առարկաների (դասընթացների) գծով ձևավորված կարողություններն ու հմտությունները, մտավոր գործունեության հնարներին տիրապետելու մակարդակը, խնդիրները բացահայտելու, լուծելու և ինքնուրույն վարկածներ ձևակերպելու կարողությունը և այլն:

Դպրոցն ավարտելուց հետո սովորողներն անցնում են արտաքին անկախ գնահատման՝ թեստավորման: Թեստավորման ապահովումն իրականացվում է Ուկրաինայի կրթության որակի գնահատման կենտրոնը: Մասնագիտության ընտրության համապատասխան սովորողն ինքնուրույն ընտրում է մեկ կամ մի քանի առարկա և հանձնում է գրավոր քննություն: Արտաքին անկախ գնահատման արդյունքները համարվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններ: Մրցութային ընտրության ժամանակ, հարկ եղած դեպքում, հաշվի է առնվում նաև միջնակարգ կրթությունը հաստատող փաստաթղթի (ատեստատի) միջին գնահատականը:

Ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Ուկրաինայում գնահատման համակարգը տարբեր ժամանակներում եղել է տարբեր: 1935 թվականին խորհրդային դպրոցներում կիրառվում էր գնահատման 5 խոսքային ձևաչափը՝ շատ վատ, վատ, միջակ, լավ, գերազանց: 1945–ից մինչև 1993 թվականը Խորհրդային Ուկրաինայում սովորողների գիտելիքները գնահատվում էր 5 բալյան համակարգով: 2000 թվականից ուկրաինական դպրոցներում գործողության մեջ դրվեց գնահատման 12–բալյան համակարգը: 10, 11,12 գնահատականներով սովորող աշակերտները համարվում են գերազանցիկ. այդօրինակ գնահատականներով սովորող շրջանավարտները պարգևատրվում են ոսկե մեդալով:

Լատվիայում գործում է գնահատման 10 միավորային համակարգը: Սովորողների ուսման մեջ ունեցած արդյունքները կանոնավոր ձևով գնահատվում են գրավոր և բանավոր ստուգումների ժամանակ: Քանակական արդյունքներն արտահայտվում են հետևյալ ձևով (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

10–բալյան համակարգ	
10	հրաշալի
9	գերազանց
8	շատ լավ
7	լավ
6	համարյա լավ
5	միջակ
3	թույլ
2	շատ թույլ
1	շատ–շատ թույլ
0	միավոր

Եթե աշակերտը չունի գործնական գիտելիքներ և կարողություններ, կամ եթե ստու–գողական աշխատանքն անհարգելի պատճառով չի հանձնել՝ ստանում է 0–միավոր:

Գնահատման նմանօրինակ համակարգ՝ աննշան տարբերություններով, գործում է նաև Մոլդովայում:

Գիտելիքի գնահատումը Ֆրանսիայում կատարվում է 20 միավորային սանդղակով: Ամենաբարձր գնահատականը 18 միավորն է: Ֆրանսիացիները փորձում են պատճառաբանել 20 միավորի բացառիկ լինելու անհրաժեշտ պայմանը, հետևապես նրանց պատկերացմամբ 20 միավոր կարող է ստանալ միայն աստված, 19–ը՝ ուսուցիչը: Առաջադիմության բարձր ցուցանիշ է 14–15–16 միավորը: Լավ սովորողների գերակշիռ մասը ստանում է 12–14 միավոր:

Գերմանիայում շարունակում է պահպանվել գնահատման 5 բալյան համակարգը: Գնահատականներն այստեղ նշանակվում են 1–ից 5–ը հաջորդականությամբ՝ բարձր միավորը 1–ն է, ցածրը՝ 5–ը:

Ուսանելի է գնահատման Մեծ Բրիտանիայի փորձը: Այստեղ կիրառվում է սովորողի առաջադիմության բառային գնահատումը, որն ուսուցչին հնարավորություն է տալիս առավել ամբողջական և ծավալուն ներկայացնել աշակերտի առաջադիմության բնութագիրը: Այսորինակ գնահատումը ոչ միայն խրախուսում է աշակերտին, այլև փոքրացնում է սխալների ծավալը՝ այն հասցնելով նվազագույնի: Ինչ եղանակով է կատարվում գնահատումը: Նախ նշենք, որ աշակերտի առարկայական առաջադիմության ընդհանուր բնութագիրը՝ ուսուցչի ծավալուն կարծիքն է: Յուրաքանչյուր առարկայի համար նա ստեղծում է առանձին փաստաթուղթ (բլանկ), որտեղ նշվում է աշակերտի անունն ու ազգանունը, ուսումնական առարկայի (դասընթացի) անվանումը, փաստաթղթի լրացման ամսաթիվը, բնութագրի ներկայացման ժամանակահատվածը (1–4 կամ 12 շաբաթ):

Ելնելով դասավանդվող առարկայի բովանդակային և կառուցվածքային առանձնահատկություններից ուսուցիչը վերոնշյալ փաստաթղթում ստեղծում է 11 կետից կազմված բնութագրիչներ՝ աշակերտի գործունեության առանձին տեսակների (դասարանական, արտադասարանական, տնային և այլն) կատարման, առարկայի (նաև ուսուցչի) նկատմամբ նրա վերաբերմունքի, դասի ընթացքում նրա ակտիվության, նյութի ընկալման խորության (գերազանց, լավ, թույլ, շատ թույլ), ճանաչողական հետաքրքրությունների բացահայտման, ուսումնական գործընթացում ինքնուրույնության, պատասխանատվության, աշխատասիրության, դասարանում նրա պահվածքի, վարքագծի և այլնի մասին: Փաստաթղթի 11–րդ կետն ուսուցչի ընդհանուր (ամփոփիչ) տպավորությունն է աշակերտի առաջադիմության մասին (գերազանց, լավ, բավարար, վատ և այլն): Փաստաթուղթը ստորագրվում է ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտի կողմից:

Սովորողի ուսումնական գործունեության և դպրոցական կյանքի ամբողջական և համալիր գնահատման առաջին լուրջ փորձերը կատարվել են ԱՄՆ–ում: Անցյալ դարի 80–ական թվականներին այստեղ գործողության մեջ դրվեց հանրակրթական գիտելիքների, կարողու–

թյունների և հմտությունների պետական չափորոշիչներն ու թեստավորման համակարգը: Թեստավորման պրակտիկան հիմնականում իրականացվում է տարրական և միջնակարգ դպրոցներում: Նահանգների գերակշիռ մասում գործածության մեջ է SAT–1 (Scholastic Aptitudes Test) թեստը. այն ավարտական քննության դեր է կատարում: Ձևավորված է հստակ ժամանակահատված (միջինը՝ 3 ժամ) թեստերին պատասխանելու համար: Նշենք, որ փորձերի քանակը չի սահմանափակվում: 1994 թվականից շրջանավարտների համար՝ բնագիտամաթեմատիկական, հասարակական-հումանիտար և օտար լեզուների հոսքերում գործածության մեջ դրվեց SAT–2 թեստը: Չնայած, որ թեստի հանձնումը կամովի է, այսուհանդերձ, որոշ բուհեր ընդունելության քննություններին դիմորդից պահանջում են SAT–2 թեստի հանձնման երաշխավորագիր. այն մեծացնում է ընդունելության հավանականությունն ու հնարավորությունը:

Քոլեջների և միջնակարգ դպրոցների մեծ մասում գործածվում է առաջադիմության գնահատման տառային ձևաչափը: Այդ ձևաչափում A–ն՝ գերազանց է, B–ն՝ լավ, G–ն՝ բավարար, D–ն վատ, F–ը՝ ձախողում: Բացի F–ից մյուս գնահատականները կարող են լինել պլյուսով կամ մինուսով. դա նշանակում է միջին մակարդակ, որն ավելի է հստակեցնում գնահատումը: Այսպես, օրինակ B+–ը նշանակում է շատ լավ, բայց ոչ գերազանց: Գործածվում են նաև յուրաքանչյուր տառի քանակական համարժեքները՝

- A + = 4,0,
- B + = 3,33,
- G + = 2,33,
- D + = 1,33,
- F = 0–ի,

կամ՝

- A = 4,0,
- B = 3,0,
- C = 2,0,
- D = 1,0–ի,

կամ՝

- A – = 3,67,
- B – = 2,67,
- C – = 1,67,
- D – = 0,67:

Ուշագրավն այն է, որ A+–ը քանակապես հավասար է A–ին: Որոշ դպրոցներում ընդհանրապես A+–ը հանված է գործածությունից: Պետք է նշել, որ քանակական համար–ժեքներին անհրաժեշտ են սովորողի միջին միավորը՝ GPA–ն՝ (Crude Point Average) հաշվելու համար: Ամեն կիսամյակում տարբեր առարկաներից աշակերտի ստացած գնահատականները գումարվում են իրար և բաժանվում անցած առարկաների քանակի վրա. ստացված արդյունքը կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած միջին միավորն է՝ GPA–ն: Միջին միավորը կարելի է հաշվել նաև ուսումնական տարվա վերջում: GPA–ն առաջին հերթին որոշում է սովորողի ակադեմիական առաջադիմությունը: Ուսումնական հաստատությունը իրավասու է հաստատել GPA–ի իր ամենավազագույն սանդղակը՝ ենթադրենք 2,0 կամ 1,67: Եթե սովորողի GPA–ն ցածր է վերոնշյալ մակարդակից, ապա նրան տրվում է փորձնական շրջան՝ տնօրինության վերահսկողության տակ: Փորձաշրջանում նա պարտադիր հաճախում է հատուկ պարապմունքների և անցնում է որոշակի դասընթացներ: Եթե նրա GPA–ն չի բարձրանում, ապա նա կարող է կամ շարունակել փորձաշրջանը, կամ էլ հեռացվել դպրոցից:

Հետաքրքիր է նաև գիտելիքների ստուգման և գնահատման ճապոնիայի փորձը: Այստեղ սովորողի գիտելիքների մակարդակն անհատապես չի գնահատվում: Քառորդի վերջում հանվում է գիտելիքների որակի ընդհանուր տոկոս և ամբողջ դասարանի համար դուրս է բերվում առաջադիմության միջին գնահատական: Ուսումնական տարվա վերջում անցկացվում է թեստավորում, որն ավելի շուտ ուղղորդվում է ոչ այնքան գիտելիքի գնահատմանը, որքան ուսուցիչ–աշակերտ փոխհարաբերություններ-

րի ախտորոշմանը: Ուսուցիչ–աշակերտ առողջ փոխհարաբերությունների ձևավորումը ճապոնական դպրոցներում առաջնահերթ խնդիր է: Այստեղ գործում է հնից եկած այն սկզբունքը, որ ճապոնացի երեխան հիմար չէ, որ իրենից վանի լավ ուսուցչին: Հետևաբար, եթե ուսուցչի և աշակերտի միջև առաջանում է կոնֆլիկտ, ապա այն անպայմանորեն լուծվում է հօգուտ աշակերտի, մինչև անգամ ուսուցիչը հեռացվում է աշխատանքից այն բանի համար, որ նա ընդհանուր լեզու չի գտել աշակերտի հետ:

Վերջին տարիներին ճապոնացի մասնագետների հեղինակավոր մի խումբ, ուսում–նասիրելով գնահատման համաշխարհային փորձը հանգել է այն տեսակետին, որ գնահատման իրենց համակարգը վերանայման և բարեփոխման անհրաժեշտություն ունի:

Այսպիսով, ընդհանրացնելով գիտելիքի գնահատման համաշխարհային փորձը գալիս ենք այն եզրակացության, որ գնահատումը սոսկ գնահատական (թվանշան) նշանակելը չէ. գնահատումն ավելի լայն և ընդգրկուն հասկացություն է. այն առաջին հերթին ուսուցումը խթանելու գործընթաց է: Գնահատումը սովորողին մղում է համագործակցության, նպաստում է նրա ակտիվ մասնակցությունն ուսման գործընթացին: Հետևաբար, գնահատվում է ոչ միայն սովորողի ուսումնական գործունեության արդյունքը, այլև դրան հասնելու բազմաբնույթ աշխատանքներում նրա ձեռք բերած համագործակցային և սոցիալական հմտությունները: Դ. և Ռ. Ջոնսոններն իրավացիորեն գտնում էին, որ համագործակցային ուսուցման գնահատումն օժանդակում է խմբում սովորողների համագործակցության խթանմանը[1]: Հետևաբար՝ գնահատումը միայն ուսուցչի մենաշնորհը չէ. գնահատում է ինչպես ուսուցիչը, դասարանը, խումբը, այնպես էլ աշակերտը: Նա գնահատում է ինքն իրեն, իսկ ինքնագանահատումը, ինքնաճանաչման, ինքնաիրացման անհրաժեշտ գրավականն է: Աշակերտը պարբերաբար լրացնում է ինքնագնահատման թերթիկը. այն լրացնելուց հետո փոխանցում է դասարանի (խմբի) մյուս աշակերտներին իրենց գնահատելու համար[2]:

Առանձին սովորողների ներկայացրած աշխատանքների հիման վրա կատարվում է ամփոփիչ գնահատում: Խմբային աշխատանքի դեպքում գնահատումն այնքան էլ հեշտ չէ: Աշակերտների միջև համագործակցային աշխատանքը խթանելու և խրախուսելու համար անհատական գնահատականի հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև խմբային գնահատման մի քանի ձևեր, հակառակ դեպքում խմբային աշխատանքի արդյունավետությունը կդրվի հարցականի տակ: Խմբային գնահատումը օգնում է սովորողին հասկանալ, որ մյուսների հաջողությունը մեծ ազդեցություն ունի իր վերջնական միավորի վրա և բացում է դռները համագործակցային աշխատանքի համար[3]:

Սովորողը նախապես պետք է իմանա թե լավ արդյունքի հասնելու համար ի՞նչ է հարկավոր և ի՞նչ է սպասվում: Ընթացիկ գնահատումը հնարավորություն է տալիս աշակերտին հստակեցնել և համակարգել իր գիտելիքները հմտություններն ու կարողությունները: Ընթացիկ գնահատումը սովորաբար կատարվում է առանց միավորների: Այն ցույց է տալիս, թե որքան ամբողջական և ծավալուն են ստացած գիտելիքները և որքան լավ են դրանք յուրացվել սովորողների կողմից:

Զարգացմանը նպաստող գնահատման եղանակներից մեկը սովորողների համար հետադարձ կապի ապահովումն է. այն օգնում է նրանց իմանալ իրենց ճիշտ կամ սխալ ուղու վրա գտնվելու մասին:

---

[1] D. Johnson, R. Johnson, The Role of Cooperative learning in Assessing and Communicating, Boston, 1998:

[2] Տես Ջոն Բենքրը, Ռաշ–Հենրիետա միջնակարգ դպրոց, Հենրիետա, Նյու–Ջերսի:

[3] B. J. Millis, and P. G. Goattel, Yr (1998), Cooperative learning for higher education faculty, American Council of Education, Series on Higher Education. The Oryx Press. Phoenix, AR.

ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК О МЕЖДУНАРОДНОМ ОПЫТЕ ОЦЕНКИ ЗНАНИЙ

ВОСКАНЯН ШОГИК

Общеуниверситетская кафедра профессионального образования и прикладной педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук

ОГАНИСЯН ЭДИТА

Соискатель общеуниверситетской кафедры профессионального образования и прикладной педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В качестве сферы социальной практики образование является связывающим звеном между опытом, накопленным человечеством, знаниями о природе, обществе, людях и возможностях их сохранения и передачи. Будучи сферой деятельности личности, образование развивает человеческий интеллект, формирует моральные, эстетические, национальные и общечеловеческие ценности, порождает стремление усовершенствовать собственную личность и общество. Образование – многообразный процесс заимствования и передачи из поколения в поколение научной информации, приобретенного социального и профессионального опыта, а также освоеннной социальной культуры.

Одним из необходимых показателей образования является знание; это факты и явления объективной действительности, которые осваивает и запоминает человек. Знание – целостность человеческих идей и их логическое объединение; оно выражает теоретическое освоение того или иного предмета учащимся. Знание есть система ценностей, следовательно, оно оценивается. В разное время и в разных странах оценка знаний производилась разными методами, принимая во внимание существующие современные представления об уровне знаний.

HISTORICAL GLIMPSE FROM THE INTERNATIONAL EXPERIENCE OF KNOWLEDGE ASSESSMENT

SHOGHIK VOSKANYAN

Chair of Professional Education and Applied Pedagogy,
ASPU After Kh. Abovyan,
Doctor of Pedagogical Sciences

EDITA HOVHANNISYAN

Researcher of the Chair of Professional Education and Applied Pedagogy,
ASPU After Kh. Abovyan,

As a sphere of social practice education is a link between experience gathered by humanity, knowledge about nature, society and human beings and the possibilities of preserving and transfering them. Being a sphere of personal activity, education develops human intellect, forms moral, esthetical, national and general values, and engenders the desire to reach personal and social perfection. Education is a multiform process of borrowing and transferring from generation to generation scientific information, acquired social and professional experience, as well as assimilated social culture.

One of the indispensable criteria of education is knowledge; those are facts and phenomena of objective reality assimilated and memorized by human beings. Knowledge is the entity of human ideas and their logical union; it expresses the theoretical assimilation of one or another discipline by the pupil. Knowledge is a system of values, so it must be estimated. In diverse periods and diverse countries estimation of knowledge was made by diverse methods, taking into consideration notions about the knowledge level existing at that time